ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

Վարչական ղեկավար՝ Կարեն Վարդանյան

Հեռ: 093 60 29 77

Մակերես՝ 12.8 կմ²

Բնակչություն՝ 404

Ինդեքս՝ 2808

karvardanyan1977@gmail.com

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյան գյուղական համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիսարևմտյան մասում:

Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանի Մուսայելյան համայնքի նախկին անվանումը Բոզոխուշէ, որը ձևավորվել է 1862թ. Արևմտյան Հայաստանի Մասիս գավառի Մեզիղլադա գյուղից գաղթած գաղթականների կողմից:

Համայնքն ունի եկեղեցի, որը կառուցվել է 1896թ.:Եկեղեցին օծվել է 1897թ.:

Մուսայելյան համայնքի տարածքում կա 2 գերեզմանոց, որոնցից մեկը հունական է մյուսը՝ հայկական: Համայնքն ունի 1941-1945թթ պատերազմում զոհվածների հուշարձան: 1935թ. Համայնքում կազմակերպվել է կոլտնտեսություն, որը գոյատևել է մինչև 1972թ. Հետագայում նրա բազայի վրա կազմակերպվել է պետական տնտեսություն, որը լուծարվել է 1991թ.:

1988թ. Երկրաշարժից հետո համայնքը վերակառուցվել է ՈՒկրանիայի Վիննիցայի մարզի շինարարների կողմից: Մուսայելյան համայնքն ունի բուժկետ, համայնքում կառուցվել է նաև՝ պետբյուջեի միջոցներով միջնակարգ դպրոց: Համայնքի կենտրոնի հեռավորությունը մայրաքաղաքից 180 կմ է, մարզկենտրոնից՝ 32կմ, շրջկենտրոնից՝ 15կմ: համայնքը գտնվում է բարձր լեռնային գոտում՝ բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2020մ է :

Համայնքի վարչական տարածքը կազմում է 5220 հա:

Մուսայելյան համայնքի բնակչությունը հիմնականում գաղթել են Արևմտյան Հայաստանի Բասեն գավառից, 2013թ. հունվարի 1-ի տվյալներով համայնքում բնակվում են 408 մարդ , ունի 99 տնտեսություն, համայնքի բնակչությունը պատկանում է հայ առաքելական լուսավորչական եկեղեցուն: